

ԿՈՒՏԻԿՆ ՈՒ ՖՈՒՇԻԿԸ



891.71.5

Դ-57

-6 NOV 2011

ՑԵՍ-ԴԱՎ

Դ-57

Վ. Ի. ԴՄԻՏՐԻԵՎ

ԿՈՒՏԻԿՆ
ՈՒ
ՖՈՒԶԻԿԸ

Փոխադրություն Ա.ՄԵԽ-ի

ԽՍՀՄ ԺՈՂՈՎԻՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ

1930



ԿՈՒՏԻԿՆ ՈՒ ՔՈՒԶԻԿԸ

I

Յերբ կուտիկի մայրը յերեխային առաջին անգամ դպրոց տարավ՝
վարժուհին զարմանքով հարցրեց.

— Ինչ փոքրն եւ Քանի՞ տարեկան կլինի:

— Շուտով յոթը կը առանա, — ասաց

Ալմաստը:

Վարժուհին գլուխն որորեց:

— Զե՛, մամիկ, չեմ կարող յերեխային
ընդունել: Առանց այն ել տեղ չկա, իսկ
դուք փոքրիկներին ել դպրոց եք բերում:
Յես ի՞նչ անեմ: Զե՛, չեմ կարող ընդունել:

— Բնդունի, աղաչում ե Ալմաստը: —
Հոգիս, կրակն եմ ընկել: Մարդո մեռել ա,
մնացել եմ յոթը վորբի տեր, մեկը մեկից
անձար, բոլորը աղջիկ: Ասենք՝ աղջկերանց
կարելի յա բանի դնել, իսկ ես անառակը
մնում ա տանը, ձեռս ու վոտս կապում:
Բնդունի, յերեխիս համար զբաղմունք կլինի:

Վարժուհին լուս նայում եր յերեխային:
Կուտիկը կանգնել եր նրա առաջ, այնքան
փոքր՝ ասես մի ճկութ մատ: Նա հագել եր
պատառոտած մորթի, ահագին, յերևի հորից մնացած փափախը ձեռ-
քին: Սև, խոշոր աչքերով կուտիկը նայում եր վարժուհուն: Փոքրիկ,
վեր ցցած քիթը ուղղակի ծիծաղ եր բերում: Նա այնքան անու-
շիկն եր, վոր վարժուհին չհամբերեց և շոյեց նրա թշերը,



60729. 67

— Ախր ինչ անէմ, — ասաց ժպտալով, — յերկի նույնիսկ խոսել չի իմանում:

— Ի՞նչ ես ասում, մատաղ, — վրա բերեց Ալմաստը, — դրա բոյին մտիկ մի տա, կրակի կտոր ա... բայց կարդալու շատ սեր ունի: Հոգիս հանում ա, թե՝ մամի, տար ինձ դպրոց: Հը, ի՞նչ ես մնջել, — դարձավ մայրը կուտիկին, սրբելով նրա քիթը, — խոսի մորաքրոջ հետ, թե չե կարծում ա դու լեզու չունես:

Կուտիկը քիթը վեր քաշեց, փափախը թափ տվեց ու ասաց.

— Ապա յես Քուչիկ ունեմ:

— Քուչիկը վորն ե, — հարցրեց վարժուհին ծիծաղելով:

— Շան հետն ա, — պատասխանեց Ալմաստը յերեխայի փոխարեն:

Մայրը քիչ սիրտ առավ, յերբ տեսավ, վոր վարժուհու արամադրությունը լավանում ե, վրա բերեց. — մի շուն ունի՝ անունը Քուչիկ: Անպետք լակոտ ա, բայց սպանես՝ իլաշից չեն բաժանվի, ամբողջ որը իրար յետեկց վաղվզում են:

— Իսկի յել անպետք չի, — միջամտեց կուտիկը նեղացած: Շատ լավ ա, Բարե տալ զիտե: Կանգնում ա յետեկի թաթերի վրա... Այ, այ...

Յեվ կուտիկը ցույց տվեց պատուհանը, վորտեղ յերեսում երբ քրքրված մազելով՝ ականջները տնկած մի շուն:

— Տեսնում ես, նստել՝ մեզ ա սպասում, — ասաց կուտիկը հաճույքով: Ե՞ս, Քուչիկ, ՀՀՀԷ՛Լ...

Յեվ կուտիկը շվացրեց ինչքան ուժ ուներ:

Մոր լեզին պատովեց:

— Այ անառակ, այ գետինը մտած, — չարացավ Ալմաստը, — իմի ի՞նչ կմտածի մորաքույրը, իսկի դպրոց ել չի ընդունի քեզ նման լպստածին...

Բայց վարժուհին ծիծաղից թուլացել եր կուտիկի ու նրա Քուչիկի վրա, վորը տիրոջ սուլոցին պատասխանեց ուրախ հաջոցով:

— Դե լավ: Ուղարկի յերեխային դպրոց: Յես կմրատեմ:

— Խրատի, քեզ մտաղ: Լսում ես, կուտիկ, կզաս գպրոց, մորաքրոջ մոտ: Լավ կսովորես, իմացար: Ասա շնորհակալ եմ: Լսում ես:

— Լսեցի, վա...

Նրանք դուրս յեկան: Քուչիկը ուրախ հաջալով վագեց նրանց առաջ և մի լավ լպստեց կուտիկի քիթը ու պոռունկը: Վարժուհին, սոր կանգնել եր պատուհանում, լսում եր, ինչպես կուտիկը խոսում եր շան հետ, փափախը ծածկելով.

— Դե, Քուչիկ, յես հիմի դպրոց եմ գնում: Ել ինձ հետ մի ընկնի:

Քուչիկն ուրախությունից զլիի վրա մի քանի անգամ պտուտ յեկավ, հաջեց ու վաղ տվեց փողոցով, իսկ կուտիկը ձեռները գրպանը դրած, լուրջ գնում եր մոր յետեկց:

II

Յերբ հաջորդ որը կուտիկը դպրոց յեկավ իր հավատարիմ շնիկի հետ, աշակերտները նրա վրա ծիծաղեցին ու սկսեցին ձեռ առնել:

— Մտիկ, մտիկ նրան, ի՞նչ հսկան ե, իսկական հսկա... բափափախը, փափախը... դեռ շուն ել ունի, շանը մտիկ, շանը... հահահա...

Կուտիկը նրանց վրա աչք չեր դարձնում, միայն փնչացնում եր քիթը: Թաղ ծիծաղեն — ով ունի այնպիսի շնիկ, ինչպես Քուչիկն է: Փափախն ել վոչինչ: Հայրեկը եղ փափախն եր ծածկում: Դառնան մորթուց ա, լավ փափախ ա, տաք: Իսկ թե կուտիկը փոքրիկ ե՝ կմեծանա:



Բայց վարժուհին Կուտիկին պաշտպանում եր:

— Մի ծաղրեք Կուտիկին, — չարանում եր աշակերտների վրա, — փոքրիկներին չի կարելի նեղացնել:

— Մորաքնոյր, դու նրան աղջիկների հետ նստացրու, — ասաց չարաճիներից մեկը: Բոլորը նորից ծիծաղեցին:

— Այ, քեզ պիտի կանգնեցնել գրատախտակի մոտ, վոր ամաչես: Մեծ ես, բայց չարություն ես անում:



Չարաճիները լոեցին և միայն սկսեցին իրար մեջ փսփսակ ցույց տալով Կուտիկի վրա. «ախր, շատ ա փոքր ե, իսկական Կուտիկ»:

Վարժուհին Կուտիկին նստեցրեց առաջի գրասեղանին դասը սկսվեց: Մեծ աշակերտները խնդիր ելին վճռում, իսկ փոքրերը տառերն ելին սովորում: Կուտիկն ել նրանց հետ սկսեց յերգել «ա~ա~... մ~մ~ա~...»: Իսկ պատուհանից յերեռում եր բրդոտ Քուչիկը, վորը տիրոջն եր սպասում: Նա հանդիսաւ նստել եր, կարծես

թե հասկանալով, վոր Կուտիկը շատ կարեոր գործով ե զբաղված, և միայն յերբեմն տնկում եր իր բրդոտ ականջները և լսում դասարանից յեկող տարորինակ ձայները:

Այսպես սկսվեց Կուտիկի դպրոցական առաջին որը: Նա տուն յեկավ և ուրախ-զվարթ շարունակում եր մրմնջալ քթի տակ «ա~ա~... մ~մ~...»: Շնիկը գնում եր նրա կողքով և լրջությամբ իր շուրջը մտիկ տալով, կարծես ուզում եր ասել. «բաս. մենք հիմի խելոքացել ենք, — գնում ենք դպրոց»:

III

Կուտիկը լավ եր սովորում: Թեպետ վարժուհին հանաքով եր նրա հետ պարապում ու շատ չեր պահանջում, բայց Կուտիկը վոչ միայն յետ չեր մնում իր ընկերներից, այլ նույնիսկ անցնում եր շատերից: Մի տառի վրա շատ դժվարացավ, դա «շ» տառն եր: Խեղճը ինչքան վոր չարչարվում եր, բերանը թքով լցնում, թշերը ուռեցնում, գլուխը քորում՝ ելի «շ»-ի տեղը «ս» եր դուրս գալիս. վրա համար ել, փոխանակ «մոշ» ասելու՝ «մոս» եր կարդում, և «Շուշիկ»-ի տեղը՝ «Սուսիկ»: Այդ բանը նրան շատ եր դառնացնում, մանավանդվ որ աշակերտները ծիծաղում եյին վրան:

— Այ դու «Սուսիկ», — չարացնում եյին յետեկ նստածները, յերք նա թշերը ուռեցրած, կարմրած, բարակ ձայնով կարդում եր «Սուսիկը մոս եր հավաքում»:

Կուտիկը նեղացավ ու դիմեց վարժուհուն:

— Մորաքնոյր, ինչի՞ յեն ծիծաղում ինձ վրա, մի թողնի:

— Վոչինչ, Կուտիկ, սիրտ ե տալիս նրան վարժուհին, թեղ ծիծաղեն, նրանց մի լսի: Այ մի տարուց դու նրանցից լավ կիսուես: Բա ի՞նչ, — դարձավ Կուտիկը, հպարտ դեպի ընկերները:

— «Մոս, մոս», — փսփսում եյին նորից աշակերտները, և Կու-

տիկը քիչ տիրեց:

Բայց այդ մի քանի անհաճությունները վոչինչ: Կուտիկն իրեն առհասարակ շատ լավ եր զգում դպրոցում: Նրան բոլորը սիրում եյին, նույնիսկ այն չարաճիները, վորոնք ծաղրում եյին շարունակ: Դասամիջոցներին Կուտիկին շաքարահաց եյին տալիս, գետնա-

Խնձոր կամ ընկուզ: Յերբեմն Քուչիկին ել փայ եր մնում: Քուչիկը
նույնպես դուր եր յեկել բոլորին, մանավանդ վոր իմանում եր
կանգնել յետեի թաթերի վրա: Դասամիջոցներին նրա շուրջը հա-
վաքվում եյին բոլորը, և Քուչիկը իր հնարքներն եր ցույց տալիս:
Յերեխաները հիացել եյին:

— Այ քեզ Քուչիկ: Շատ լավն ե,— բացականչում եյին
նրանք, — Կուտիկ, վորտեղից ես ճարել ես շնիկը, մարդ չի կշտա-
նում մտիկ տալով:

Ծնիկի բուրդը նման եր կեղտոտ ցնցոտու: Պոչի ու ականջի
մազերը ցցվել եյին, ամբողջ դունչը
կորած եր մազերի մեջ, բայց
աչքերը շատ սիրուն եյին, խոշոր,
խելոք, ուշաղիր, կարծես թե Քու-
չիկը մարդու նման հասկանում եր:
Չնայած վոր Կուտիկը շատ
հեռու յեր ապրում դպրոցից, հա-
մարյա թե գյուղի ծայրին, խելի
մյուս ափը, բայց դպրոց եր գա-
լիս բոլորից շուտ: Դեռ նոր լույսը
ծագած, յերք վարժուհին դեռ պառ-
կած եր լինում անկողնում՝ միջանց-
քում արդեն լսվում եր ինչ վոր
շշուկ, — մեկը զգուշությամբ հա-
նում եր վոտնամանները, և դպրոցի

դուռը կամաց բացում. վարժուհին լսում եր ծանոթ քթի խորցը.

— Դու յես, Կուտիկ, հարցնում եր նա իր սենյակից:

— Յես եմ, մորաքույր:

— Մըսել ես:


— Զե, յես ենքան չեմ մըսել, Քուչիկը կարող ա մըսած
լինի, — պատասխանում եր խորամանկ Կուտիկը:

Բայց վարժուհին գիտեր Կուտիկի խորամանկ հնարքները և
ծիծաղելով ասում եր,

— Վախ, խեղճ Քուչիկ, տար ներս թող տաքանա:

Կուտիկին եղ եր հարկավոր: Նա շնիկին ներս եր բերում, վորը
շնորհակալություն եր հայտնում պոչը շարժելով ու պառկում վա-
ռարանի մոտ:

Հետո գալիս եր հարեանուհին, վառում եր վառարանը, մաք-
րում դասարանը և պատրաստում ինքնայեռը վարժուհու համար:



Կուտիկն ոգնում եր նրան ցախ կրելիս: Վառարանը վառում եյին
և հաճելի տաքությունը տարածվում եր չորս կողմը: Ծնիկն սկսում
եր մոմոալ, նույնիսկ ուզում եր հարեանուհու ձեռները լիզել,
բայց հարեանուհին շատ խիստ կին եր, նա չեր սիրում հանաքներ
ու Քուչիկին քշում եր:

— Կորի, կորի: Ինչ յես ներս թողնում կեղտոտին:

— Սուտ ես ասում, — տրանջում եր Կուտիկը, կատուն ա
կեղտոտ լինում, իսկ իմ Քուչիկը կեղտոտ չի:

— Դե լավ, հիմի ինձ մի սովորեցնի:

Յեվ կուտիկը չեր զիջում, նրանք վիճում եյին, մինչև ինքնաշխոր յեփ եր գալիս: Յերբեմն պատահում եր, վոր տաք վեճի ժամանակ, հարևանուհին չեր նկատում, թե ինչպես ինքնայեռը յեփ եր գալիս ու կողքերից թափվում: Այդ ժամանակ ամեն ինչ երար եր խառնվում: Կուտիկը շտապում եր խողովակը վերցնել, հարևանուհին ինքնայեռի ծածկոցն եր ման գալիս, իսկ վախեցած Քուչիկը թագնվում եր զրասեղանի տակ:

Վարժուհին ծիծաղից թուլանում եր:

— Ես բոլորը քո պատճառովն ա, անառակ տղա, — մըթմըթում եր հարևանուհին. — տես ինչ ելավ, քեզ հետ խոսքի բոնվեցի՝ ջուրը թափվեց:

— Դե, վոր զիտես, ուրիշ անգամ ինձ հետ մի վիճի. — չարացնում եր կուտիկը:

— Հերիք ե, լավ, կուտիկ, արի հիմի թեյ խմիր, — ասում եր վարժուհին:

Կուտիկը նազ չեր անում: Նա հանում եր մըթին և մտնում եր վարժուհու սենյակը: Վարժուհին նրա առաջ դնում եր մի բաժակ թեյ ու սե հացի մեծ կտոր: Կուտիկը շատ եր սիրում թեյ խմել: Խմում եր մեծ հաճույքով, կծում շաքարն ու լափում հացի պատառները: Հացը նա ուտում և մինչև վերջին փշուրը, իսկ շաքարը քիչ թողնում: Բաժակը շուտ եր տալիս, շաքարի կտորը դնում վրան ու ասում «հերիք ա»: Այդ բանը կրկնվում եր ամեն որ: Վարժուհին ամեն անգամ նկատում եր:

— Կուտիկ, ելի՞ շաքար ավելացրիր: Վերցրու կեր:

— Դե լավ — ասում եր կուտիկը, և շաքարը պահում շալվարի զրպանում. — Կտանեմ Սաթիկին:

Սաթիկը կուտիկի ամենափոքր քույրիկն եր:

Կուտիկը շատ եր սիրում նրան: Յերբ մի մի անգամ վարժուհին հացի տեղ բլիթներ եր տալիս, կուտիկը պահում եր Սաթիկի համար:

— Դու ինքդ կեր, — ասում եր նրան վարժուհին. — յես Սաթիկի համար ել կտամ:

— Յես ինչի պիտի ուտեմ: Յես հացով ել կկշտանամ. յես մեծ եմ, իսկ Սաթիկը փոքր ա...

IV

Մի անգամ, դասերից հետո, կուտիկը հագնվեց ու մոտեցավ վարժուհուն:

— Մորաքույր, գնանք մեր տուն:

— Գնանք, գնանք:

— Յես քեզ կսպասեմ փողոցում:

Նա անհամբեր սպասում եր տուն գնալուն, են ել ում՝ մորաքոյն հետ:

Հպարտացած նստեց քարի վրա:

— Կուտիկ, չես գալիս գնանք. — կանչում եյին ընկերները:

— Յես մորաքոյն եմ սպասում:

Զարաձճիները նրան տվին ձյունագնդի տակ ու փախան: Կուտիկը շատ եր ցանկանում նրանց հախիցը գալ, բայց համբերեց. — ինչպէս կարելի յե, մորաքույրը նրանց մոտ հյուր ե գնում, իսկ ինքը ձյունագնդի յե խաղում: Յերեխա հո չի:

— Հը, կուտիկ, ինչ տանենք Սաթիկի համար. — հարցրեց վարժուհին դուրս գալով փողոց:

Կուտիկը մի քիչ մտածեց, գլուխը քորեց ու ասաց.

— Բլիթներ:

— Լավ, գնանք խանութ բլիթներ առնենք:


Գնացին խանութ: Բլիթներ գնեցին, մի քանի հատ ել սպիտակ, մափուկ խմորեղեն: Կուտիկի թուքը վագեց յերբ տեսավ:

— Բա սրանք ում համար:

— Բոլորը Սաթիկին:

— Զան, — չդիմացավ կուտիկը ու սկսեց թուչոտել:

Ել վոչինչ չեր կարողանում խոսել: Բլիթների ու շաքարահացի վրա նրա ուրախությանը չափ չկար: Այդպիսի բան դեռ յերբեք չեր տեսել: Եսքան նվեր մի անգամից... նույնիսկ, յերբ դեռ հայրիկը կենդանի յեր, ելի այդպիսի բան չեր պատահել: Լինում եր, յերբեմն բազարից մի մի անգամ բլիթ կամ շաքարահաց եր բերում, բայց բոլորը միանգամից... Զե, այդպիսի բան չի յեղել... բա, Սաթիկը, Սաթիկը, ինչքան կուրախանա,



Խեր անց կացան և ընկան ձնի մեջ թաղված մի նեղ ճանապարհի վրա: Հեռվից յերեսում եյին փոքրիկ խրճիթները: Այստեղ չորս կողմը խուլ եր ու ամայի:

— Այ, մեր տունը, — ցույց տվեց Կուտիկն ուրախ: Փոքրիկ խըրճիթը նույնպես թաղված եր ձյունի տակ: Հաղիկ նկատվում եր յերթիկը:

Մոտեցան: Կուտիկն խսկական տանումեծի նման սկսեց թակել դուռը: Քուչիկն իբրև պատասխան սկսեց ուրախ հաջել:

— Ո՞վ ա, — լսվեց Ալմաստի ձայնը:

— Յես եմ, մամի. մորաքրոջ հետ ենք յեկել, — ձայն տվեց Կուտիկը: Ալմաստը գուռը բացեց: Նրանք մտան փոքրիկ, մութ ու նեղվածք խրճիթը:

Կուտիկի մեծ քույրը, վոր մոտ 13 տարեկան եր՝ նստել եր քուխարիկի դռան և մանում եր: Վաղվզում եյին մնացած աղջիկները, մեկը միուսից փոքր, բոլորն ել պատառուած, սպիտակ շապիկներով: Անկյունում դրված եր որորոցը, վորի մեջ որորվում եր փոքրիկ Սաթիկը: Նա շատ նման եր Կուտիկին: Յերբ վարժուհին ներս մտավ, Սաթիկը վախեցավ և սկսեց լաց լինել, իսկ մուսները թագնվեցին մոր յետև:

— Տանումեծն յեկավ, — ճաց նրանցից մեկը և ծիծաղ բարձրացավ:

— Դե, ապա, միք լպսովի... — բարկացավ Կուտիկը. — Եդ ինձ վրա եյին ծիծաղում, մորաքրոյր, — դարձավ նա վարժուհուն:

— Դե ի՞նչ արած, — ասաց Ալմաստը, շոյելով Կուտիկի զլուխն ու ժպտալով, — տանումեծ ես, բա ի՞նչ: Մեջներս մի տղամարդ կա, վոր մեզ պիտի կերակրի:

Սաթիկն ել չեր լալիս ու զարմացած նայում եր վարժուհուն: Աղջիկները նույնպես քիշ-քիշ սկսեցին շրջապատել վարժուհուն, սկսեցին ձեռք տալ նրա շորերին, թաշկինակին, իսկ յերբ վարժուհին սեղանի վրա դրեց նվերները՝ նրանք ուրախությունից խելքները թոցրին: «Տես, տես, ինչքան բլիթ ա բերել... բա շաքարահացը...» Փափսում եյին նրանք իրար մեջ: — «Ի՞նձ ել, ինձ ել» — ճաց Սաթիկը: Ստիպված, նրան ել դուրս բերին որորոցից: Ալմաստի տանը



տոն եր: Վաղուց այդպիսի ուրախություն չեր յեղել... Բոլորից գոհ և ուրախը փոքրիկ տանումեծն եր Նա այնքան հուզվել եր, վոր պար եր գալիս: Բայց այդ ժամանակ Թուչիկը վոտների մեջն ընկալվ: Նա գլխակոնծի տվեց, քիթը կպավ բուխարուն և ջարդվեց: Տրամադրությունը փչացավ, Գնաց պառկեց Սաթիկի մոտ, մեջքը տվեց մոր մեջքին ու քնեց:



V

Ակսվեցին սաստիկ ցրտերը: Բուք ու բորան եր: Աշակերտները քիչ քիչ պակասում եյին: Նրանցից շատերը հեռու եյին ապրում, դրա համար վախենում եյին գալ դպրոց: Մանավանդ աղքատների բանը շատ վատ եր: Նրանք տաք շորեր չունեյին, և ստիպված տանը սպասում եյին, վոր որերը քիչ տաքանան: Բայց գյուղի մեջ ամենից խեղճը Ալմաստն եր իր յերեխաներով: Ոգնական ձեռք չունենալու պատճառով չեր կարողանում յոլա գնալ: Մարդ չկար, վոր տան կտուրը սրբեր, ցախ բերեր, ոջախը վառեր: Վոչ վոք չկար, վոր մտիկ տար անսաստներին ու յերեխաների գլխի ճարը տեսներ:

Նա հաճախ իր ընտանիքով մնում եր սոված՝ խավար ու սառը տան մեջ: Կողմ ել դրսից եր սոված բառաչում: Վարժուհին ոգնում եր, վորքան կարողանում եր, բայց բան չեր դուրս գալիս:

Խեղճ Ալմաստն այնքան չարչարվում եր, վոր ուժից ընկնում եր:

Բայց չնայած այդ բոլորին՝ Կուտիկը նորից շարունակում եր գնալ դպրոց: Վարժուհին նրա համար մի տաք շապիկ կարեց, բաշլուղ ու վալինկաներ տվեց, վոր յերեխան չմրսի: Յերբ սաստիկ բուք ու սառնամանիք եր լինում, վարժուհին Կուտիկին պահում եր դըպրոցում: Այդպիսի յերեկոները անց եյին կենում շատ հաճելի ու խաղաղ: Դուրսը քամին վոռնում եր, ձյուն եր գալիս, իսկ դըպրոցում տաք եր, դուրեկան: Մեղանի վրա վառվում եր ճրագը, վարժուհին կարգում եր, իսկ Կուտիկը նստած սեղանի առաջ, լեզուն դուրս հանած՝ տառեր եր գրում քարետախտակի վրա: Քուչիկն ել, վառարանի մոտ, մեկ մեկ մումուռմ եր քնած տեղը: Բայց Կուտիկը Թուչիկի մասին իսկի չեր ել մտածում, այնքան տարված եր լինում իր աշխատանքով: Յերբեմն գրածը բռնում եր հեռու, ու հիացած մտիկ անում իր դուրս բերած տառերին: Այդ տառերը շատ եյին դուր գալիս: Վոչինչ, վոր «ա» ծուռն եր ընկել կաղվիկի նման, իսկ «շ» դառնում եր պոչը կոտրած մանգաղ: Կուտիկը անմիջապես նկատում եր պակասությունները և աշխատում ուղղել, վորի ժամանակ խոսում եր տառերի հետ:

— Սպասի՛, սպասի՛, մրմնջում եր նա. — Ի՞նչ ես բերանդ բաց արել, լավ չի... փակնմ... բա ես մեկը՝ ի՞նչ ես կաղվիկի նման... քեզ համար մի վոտ շնեմ..., այ լավ ա հիմի...

Ցեվ տառերը կարգի բերելով, նա դառնում եր վարժուհուն.

— Ապա՛, մորաքուր, մի տես՝ լավին ա:

— Շատ լավ ե, — պատասխանում եր վարժուհին ու նորից թաղվում ընթերցանության մեջ: Կուտիկը շատ գոհ եր մնում:

Յերբ Կուտիկը հոգնում եր, վարժուհին նրա համար գրքեր եր կարգում, նկարներ ցույց տալիս և զանազան հետաքրքիր բաներ պատճենմ: Կուտիկը շատ եր սիրում պատմություններ, և լիքը սրտով ծիծաղում եր, «արջի ու մոծակի» պատմությունը լսելիս:

— Ապա, մորաքուր, մեկ ել պատմի, ինչպես մոծակները քոթոթի վրա ընկան... բա քոթոթն ուզում եր նրանց բունը քանդի...
մեկ ել պատմի մորաքուր:

— Հերթիք ե, Կուտիկ, նույն բանը քեզ տաս անգամ պատմեցի,
դե հիմի դու պատմի:

— Ախր յես վճնց պատմեմ, — և Կուտիկը նեղ տեղն ընկավ.
«Լինում ա, չի լինում, մի գիտ քոթոթ, ու մոծակներ...»

Կանգնեց ու սկսեց գլուխը քորել:

— Հետո, — ասաց վարժուհին, — հետո ի՞նչ յեղավ:

— Ել ի՞նչ հետո, ել բան չկա:

Վարժուհին ծիծաղեց, իսկ Կուտիկը շատ ուրախացավ, վոր
վարժուհուն ծիծաղացրեց իր հեթիաթով:

Ավելի շատ, Կուտիկը նրան պատմում եր իրենց տան մասին,
թե ինչպես եյին ապրում հայրիկի որով:

Հայրիկը յերբ կենդանի յեր, նրանք լավ եյին ապրում, սոված
չեյին մառմ, բայց յերբ նա մեռավ, ձին ծախեցին, վոչխարն ել
տարան: Այնքան խեղճացան, վոր սև հաց ել չեն ճարում: Այդ հի-
շողություններն անելիս, Կուտիկի խոշոր աչքերը տիրում եյին, նա
լրջանում եր չափահաս մարդու նման: Բայց վարժուհին միշտ
հույս եր տալիս:

— Բան չկա, Կուտիկ, — ասում եր շոյելով յերեխային. — այ,
կմեծանաս, են ժամանակ կղառնաս հայրիկի նման:

Կուտիկը վոգեվորվում եր:

— Հենց վոր մեծանամ, անպատճառ ձի կառնեմ: Վար կանեմ,
լավ ձի կառնեմ: Կով ել կառնեմ: Են ժամանակ լավ կլինի: Մենք
մի կով ունենք, հերթիք չի հանում, ութ հոգի յենք: Դու տեսել ես
մեր կովը:


— Զե, չեմ տեսել:

— Այ, յերբ մեկ ել կգաս մեր տուն, քեզ ցույց կտամ: Նրա
անունը Ծաղիկ ա, ճակատը սիստակ ա, զրա համար ել Ծաղիկ ենք
ասում: Վոր մեծանամ, հայրիկի նման դառնամ՝ մեզ համար տուն
կշինեմ, այ, դպրոցի նման: Հետո մայրիկի համար շորեր կառնեմ,
Սաթիկի համար քաղցր բաներ կրերեմ: Քեզ համար ել նվեր կրերեմ:

— Շնորհակալ եմ, Կուտիկ, վոր ինձ ել չես մոռանա:
— Ախր յես քեզ շատ եմ սիրում: Այ, վոր նոր տուն շինենք,
են ժամանակ դու կզաս մեր տանը կապրես:

— Լավ, բա դպրոցը:

— Դպրոց մենք ձիով կդանք: Են ժամանակ մենք ձիեր կունենանք:
Այսպիսի զրույցներով յերեկոն անցնում եր: Ընթրիքից հետո,
կամաց-կամաց Կուտիկի կոպերը փակվում եյին, և նա Քուչիկի
կողքին մըափում եր: Վարժուհին քնած յերեխային դնում եր ան-
կողինը, իսկ Քուչիկը ընթրիքի մացորդները խժուելով, դուրս եր
գալիս փողոց, վոր դպրոցը պահպանի: Ամբողջ գիշերը գրաից լավում
եր պահակի հաջոցը:



VI

Թեև դպրոցում տաք եր ու հաճելի, և վարժուհին ել պատ-
մություններ եր պատմում, բայց Կուտիկը կարոտում եր տանը,
յերբ սախպված եր լինում ցրտի պատճառով մի քանի գիշեր դպրոցում
մնալ: Հաճախ գրելիս, նա մեկ մեկ զլուխը բարձրացնում եր, ականջ
դնում քամու վոռնոցին և ախ քաշելով, մնում եր տիրուր նստած:
— Ինչի՞ մասին ես մտածում, Կուտիկ, — հարցնում եր վար-
ժուհին:

— Հիմի տեսնես ի՞նչ են շինում մերոնք — մըմնջում եր կուտիկը, — ախր ցուրտ ա.. գիշերը առանց ինձ, յերկի վախենալիս կլինեն...

— Ի՞նչի՞ պիտի վախեն:

— Ո՞վ ա իմանում... գել կա, բան կա...

— Գայլերը տուն չեն մտնի:

— Գողերը:

— Զե՞ մի, գող: Մեր գյուղը գող չկա:

— Դե տանը լինեմ, լավ ա, ինչքան չլինի տղամարդ եմ...

— Այ՛ քեզ նման տղամարդ... — ծիծաղեց վարժուհին — աղա, արի տեսնենք՝ ո՞վ ում կհաղթի:

Յեկ նա կուտիկին բոնեց, հանեց մինչև առաստաղը, իսկ Քուչիկը՝ կարծելով թե իր տիրոջ վտանգ ե սպառնում՝ սկսեց վոռնալ:

Բայց այդ հանաքները կուտիկի սիրտը չթեթևացրին: Նստելով հաստիկին, գրկեց Քուչիկի զլուխը և սկսեց նրա հետ ցածր զրույց անել:

— Քուչիկ, ա Քուչիկ, տուն ես ուզում գնալ համ... տանը լավ ա չե: Յերեկի մամեն մանում ա, Վարդին ել մանելիս կլինի, իսկ Սաթիկին որորում են... Կովը հիմի մրսել ա չե... խեղճը հիմի բառաչում ա: Շատ կարելի յա եսոր բան չի կերել: Ի՞նչ անենք, Քուչիկ: Մայրիկը հիմի կարոտած կլինի մեզ: Հիմի կասի՝ մւր ա կուտիկը...

Նրա աչքերում արտասուք յերեաց, իսկ Քուչիկն զգալով, վոր փոքրիկ տանումեծը տխուր ե, սկսեց մոմռալ ու լիզել նրա ձեռները:

— Ի՞նչ ե, կուտիկ, շատ ես կարոտել ձեր տանը, — հարցրեց վարժուհին, վոր լսել եր այդ զրույցը:

Կուտիկը մի քիչ անհարմար զգաց իրեն, և վորպեսզի վարժուհու սիրտը չկոտրի, ասաց՝

— Յես... չե... կարող ա մամին կարոտած լինի...

— Լավ, վաղը կանաս տուն:

Կուտիկը զվարթացավ:

Մյուս որը, հենց վոր դասերը վերջացան, վաղ տվեց տուն, գրպանում անպայման մի բլիթ պահած: Այդ գիշերը տանը քնելով.

առավոտը դպրոց յեկավ շատ ուրախ, սկսեց վարժուհուն պատմել զանազան նոր բաներ, — գայլի մասին, վոր հարեանի վոչխարը տարել եր, Ծաղիկի մասին, Սաթիկի մասին: Յեկ նորից ամեն ինչ գնաց իր կարգով:

VII

Մի անգամ, վարժուհու համար նոր հաց եյին թխել: Են որն առավոտվանից կուտիկը շարունակ խոսում եր տուն գնալու մասին:

Յերբ նստեցին ճաշելու, սեղանի վրա դրին տաք հացը և անուշ հոտը բռնեց: Կուտիկը ել չդիմացավ ու ասաց:

— Մորաքներ, մամի համար տաք հաց տանեմ: Կարելի՞ յա:

— Լավ, — ասաց վարժուհին, — սպասի ճաշենք, հետո կդնաս տուն:

Բայց զեռ ճաշը չեյին վերջացրել, յերբ ձյունն այնքան սաստկացավ, վոր դպրոցը մթնեց:

— Վայ, կուտիկ, տես դուրսը ի՞նչ բորան ե բոնել, ի՞նչպես պիտի գնաս:

Կուտիկին այնքան տխրեց, վոր նույնիսկ գդալը վեր դրեց:

— Զե՞ մորաքներ, յես գնացի: — ասաց նա աղաչանքով: Ի՞նչ կա վոր, ճանապարհը գիտեմ:

Վարժուհին չեր ուզում յերեխային բաց թողնել յեղանակի պատճառով, բայց կուտիկին այնպես խնդրանքով եր նայում, այնպես եր խեղճացել, վոր նա չկարողացավ մերժել:

Կուտիկին փաթաթեցին, կապոտեցին տաք լաթերով, հացը դրին սոսպակում և ճամբու դրին: Քուչիկը վաղ տվեց առաջից, և յերկուսով կորան բքի մեջ:

Վարժուհին վերադարձավ դպրոց և նստեց, վոր կարդա, բայց չեր կարողանում: Շարունակ մտածում եր կուտիկի մասին, ու մոտենում պատուհանին: Փողոցում արդեն սարսափելի բորան եր:

Յերկինքը փուլ եր գալիս ու ծածկում տուն, ճանապարհ, ամեն ինչ: Ժամի գանգերը տալիս եյին, վոր յեթե ճանապարհին մարդ կա, չմոլորվի: Շուտով մութը կոփեց:

— Ի՞նչի՞ թողի, — մտածում եր վարժուհին անհանգիստ, — կամ գոնե յես ել հետը գնայի... յերեխան ինչպես պիտի տուն հասնի...

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20

Վերջիվերջո չհամբերեց, հագնվեց ու փողոց դուրս յեկավ։
Բայց դուռն շեմքին աչքերը ձնով լցվեցին, քամին քիչ եր մնում շուռ
տար նրան։ Նա գնաց հարեանի մոտ, պատմեց բանը ինչումն ե,
և խնդրեց, վոր մեկն ու մեկն իր հետը դնեն մինչև Ալմաստի տունը։
Հարեանի տղան՝ Կարոն՝ հագնվեց, վերցրեց մի փայտ և ճանապարհ
ընկան։ Բայց հազիվ եյին դուրս յեկել, վոր քամուց լապտերը հան-
գավ։ Նրանք մնացին խավարում։ Զյունը քուլա-քուլա դալիս եր։
Զանգերը գեռ տալիս եյին։ Խրճիթների ճրագները բքի միջից հա-
զիվ յերեւում եյին։ Կարոն գնում եր առաջից, ձեռի փայտով վո-
րոնելով ճանապարհը։ Վարժուհին գնում եր նրա յետեից։ Շատ
դժվար եր։ Ճանապարհ չկար, և նրանք շարունակ գետին եյին փըռ-
վում՝ մեկ աջ, մեկ ձախ։

Վերջապես մի կերպ հասան Ալմաստի խրճիթը, և դուռը թա-
կեցին։ Դուռը բացեց ինքը, Ալմաստը՝ վախեցած և զարմացած։

— Բա Կուտիկն ուր ե, — հարցրեց վարժուհին վազելով խրճի-
թըն ու չորս կողմը փնտոելով յերեխային։

— Կուտիկը — ասաց Ալմաստը գույնը թռած, — նա ինչ յերեկ
գնացել ա դպրոց, գեռ տուն չի յեկել

Վարժուհու ծնկները թուլացան։ Նա ընկավ տախտի վրա։ Ամ-
բողջ մարմնով սառը դող անցավ։ Ալմաստը նայում եր նրան և չի-
մանալով ինչումն ե բանը՝ ավելի ու ավելի սիրթնում եր։ Հանկարծ
նա գլխի ընկավ, փովեց ու սկսեց նվազ։ Հատակի վրա թափած յե-
րեխաները վեր թռան և նույնպես սկսեցին ճշար։

Վարժուհին ուշքի յեկավ։

— Ի՞նչ անենք հիմի. — ասաց նա հառաչելով ու դողալով. —
Կարո, գնանք... Հարեաններին ձայն տանք, փնտոել ա հարկավոր։

Կարոն վազ տվեց հարեանների մոտ։ Դեռ վոչ վոք չեր քնել,
և շուտով սկսեցին հավաքվել մարդիկ։ Բոլորը ախ եյին քաշում,
ափսոսում եյին Կուտիկին ու հարց տալիս Ալմաստին։ Բայց իւղա-
մայրը ցավից գժված, չեր լառում վոչ վոքի և սրան ու նրան
պարզում եր իր ձեռները, աղաչում, խնդրում, վոր գնան փնարեն։

— Զեզ մատաղ... ձեր արևուն մեռնեմ... տատծու սիրուն...
իմ երեխես..., մինուճար երեխես...

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20

— Վորտեղ հիմի գտնես, — ասաց մեկը, — մտիկ՝ ինչ բորան ա,
աչքը մատ կոխես՝ բան չի յերեա, ով ա իմանում, վոր քարի տակն
ա մնացել։

Վարժուհին լալիս եր, իսկ Ալմաստը կիսամեռ փովել եր գետ-
նին, Հարեանները նրա յերեսին ջուր երին փշում, իսկ տղամարդիկ
հավաքված խոսում եյին ու խղճում Ալմաստին։

— Ափսոս Կուտիկը... կորավ յերեխան... ես անիծած բորանին
հասակով մարդն ել կկորչի, — փսփսում եյին նրանք։

Հանկարծ, ձնաթաթախ ներս վազեց հարեանի յերեխան ու ասաց.

— Դենիցը շան վազատոց ա դալիս. հենց ա վոռնում վոր...»

— Ի՞նչ շան, ի՞նչ ես դուրս տալիս, — մեջ մտան մարդիկ։

— Դրուստ վոր վազատոցի ձեն ա գալի, յես վազուց ա լսում եմ,
մենակ ասում երի՝ կարելի յա գել լինի։

— Սպասի, կարելի յա թուչիկն ա. — մեջ ընկավ մեկը ուրա-
խացած։ Թուչիկը... ախը դրանք իրար հետ են ման գալիս...»

— Թուչիկը կլինի, թուչիկը... — վեր թռավ տեղից վարժուհին։
Գնանք, գնանք, շնւտ... Թուչիկը, նրանք միասին եյին...»

Մարդիկ խմբով դուրս յեկան խրճիթից։ Վերցրին բահեր, ճրագ-
ներ ու փայտեր։ Բուքը նորից սաստկանում եր։

Զանգերը նորից տալիս եյին...»

Դուրս գալով փողոցը, սկսեցին ականջ դնել։ Բան չեր լսվում։
— Պետիկ, ուր ա՛շան ձենը չի գալիս...»


— Դրուստ եմ ասում... վազատում եր, — հավատացնում եր Պե-
տիկը. — մի քիչ կացեք՝ ձենը կգա... այ, այ...»

Բոլորը պապանձվեցին։ Խսկավես խելի մուտքերից տիսուր,
յերկար ու ձիգ՝ շան վազատոց եր գալիս։

— Դե, տղերք, — ձեն տվեց Կարոն։

Յեվ բոլորը գնացին վազատոցի ձենի վրա։ Վարժուհին ուժից
ընկած, լալով, քաշեքաշ, գնում եր յետեներից։ Նա չեր նկատել նույն-
իսկ, վոր կրկնակոշիկները մնացել եյին ճանապարհին։

Բավական ժամանակ գնացին։ Վոտները խրվում եյին ձնի մեջ։
Մեկ ընկնում եյին։ Քամին հանգցնում եր լապտերները։ Վոտ-
նոցը մեկ շատ մոտիկից եր գալիս, մեկ ել քամին տանում եր,



իլացնում: Այն ժամանակ նրանք կանգնում եյին, սպասում, վոր ճիշտ վորոշեն շան տեղը: Անա յերեաց մի սև խոշոր բան ձյան վրա... վնդստոցն արդեն շատ մոտ եր...

— Իսկապես Քուչիկի ձենն ա, ապա տղերք, մի լավ լսեք... —

Բոլորը կանգնեցին: Լսվում եր միայն մարդկանց ծանր շնչառությունը: Շան վնդստոցն ելի յեկավ...

— Քուչիկը, Քուչիկը... — բղավեց վարժուհին:

Վնդոցը դադարեց: Հանկարծ հաչելով մոտ վազեց շունը: Իսկապես վոր Քուչիկն եր, բրդոտ Քուչիկը: Նա սկսեց լպսուել մեկ սրան, մեկ նրան ու ելի յետ վազեց: Բոլորը ցրիվ յեկան ու սկսեցին փնտուել:

— Եստեղ ա, գտն... — լսվեց Կարոյի ձայնը:

Այդ կողմը վազեցին ու սկսեցին բահերով ու ձեռներով փորփրել ձյունը, վոր ծածկել եր յերեխային: Քուչիկը մեկ հաչում, մեկ ոգնում եր մարդկանց իր դնչով ու թաթերով: Վերջապես դուրս բերին Կուտիկին: Խեղճ յերեխան մեջքը տվել եր քարին և կծկվել, ընկել անզգա:

Նրան վերցրին ու տարան: Ալմաստն արդեն սպասում եր դռանը կանգնած: Տեսնելով յերեխային, վրա պրծալ:

— Սպասիր, — չթողեց Կարոն, — շվել ա հարկավոր. կարելի յալենդանի յա դեռ... Ապա տղերք, սրա շորերը հանեք...

Կուտիկին դրին հարդի վրա և սկսեցին ձնով շվել: Ամենից շատ Կարոն եր մեջ ընկել: Քրտինքը վազում եր: Հանկարծ նա կանգնեց ու ժպտալով մտիկ տվեց չորս կողմը:

— Տաքանում ա... ձեռներն ել ծալվում են:

Կուտիկին շրջապատեցին: Ալմաստը լալիս եր:

— Ել ի՞նչ ես լալի... — ասաց Կարոն անուշությամբ. — պետք ե ուրախանաս, վոր երեխեղ կենդանացավ, իսկ դու նվվում ես: Գնա մի տաք մորթի բեր...

Ալմաստը գնաց մորթի բերելու:

Յերեխաները յերբ լսեցին, վոր Կուտիկը ուշքի յե գալիս՝ ուրախությունից շապկանց ներս թափվեցին: Բայց նրանց յետ տարան, վոր չսառչեն:



● ● ● ● ● ● ● ● ● ● ● ● ● ● ● ● ● ●

Կուտիկն արդեն տնքոց հանեց... մեկ ել, մեկ ել... և կամաց սկսեց ուշքի գալ: Քուչիկը մոմուալով լիզում եր նրա քիթ ու պռունկը: Վարժուհին լախս եր ու համբուրում կուտիկին: Նա Քուչիկն ել շոյեց. — «Սիրելի Քուչիկ, լավ Քուչիկ...»: Նույնիսկ զյուղիները սկսեցին գովել շանը:

Կուտիկը մեկ ել տնքաց և բաց արեց իր խոշոր, ոև աչքերը, և զարմացած չորս կողմը նայելով, հասկացավ գլխի յեկածը: Տեսնելով մորը, վոր լախս եր՝ ժպտաց, փորձեց կանգնել ու հազիվ լսելի ձայնով շշնջաց.

— Մամի, լաց մի լինի, յես քեզ համար... տաք հաց եմ բերել...

Յեթե իմ փոքրիկ ընթերցողները ցանկանում են իմանալ, թե հետո ի՞նչ յեղալ կուտիկը՝ յես կարող եմ ասել: Հիմա արդեն մեծացել ե, 16 տարեկան ե դառել... Նա վաղուց ե դպրոցը վերջացրել: Մոտ որերս վարժուհին, վոր հեռացել եր նրանց գյուղից՝ կուտիկից նամակ ստացավ. այ ինչ ե զրել.

«Շատ սիրելի մորաքույր: Բարե քեզ ինձանից ու մայրիկից: Մենք հիմի լավ ենք ապրում: Մենակ ափսոս, վոր դու եստեղ չես: Վոր եստեղ լինեյիր՝ ինչքան կուրախանայինք: Քույրերս դպրոց են գնում, իսկ Սաթիկը առաջվա նման ելի շաքարահաց ե սիրում: Քուչիկը նույնպես կենդանի յե, մենակ թե՝ գելը պոչը պոկել ե: Յերբ ասում եմ ուր ե մորաքույրը, վազ ե տախս և ուրախ հաշում:

Յես լավ-լավ գրքեր եմ կարդացել: Մենք մեր գյուղում ընթերցարան ենք շինել, ենտեղ հավաքվում ենք ու բարձր ձենով բոլորի համար կարդում: Շուտով մենք պատի լրագիր ել կունենանք: Սիրելի մորաքույր, յես հիմի կոմսոմոլ եմ զրվել: Մամեն տուած հայնոյում եր, հիմի վոչինչ, գովում ե: Մենք հիմի քաղաքի հետ ենք կապված, ամեն շաբաթ մեկը գալիս ե: Հիմի Պետիկը, Վանիկը, բոլորը մեծացել են, ենպես բնյ են քաշել, վոր տեսնես՝ չես ճանաչի: Նրանք ել, են կոմսոմոլ զրվել: Արի մեզ մոտ: Են հին անունս ենպես ել կապվ ու մնաց:

Քո աշակերտ:

Սուսիկ Ավետյան, կամ ինչպես առում են՝ կո տիկ»:



788

15 40т.

3161

801



В. И. ДМИТРИЕВ
МАЛЫШ и ЖУЧКА

На армянском языке

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ С. С. С. Р.
Москва, центр, Никольская, 10